

ս. Գրիգորի եկեղեցուց, Այժմ՝ աւետել կարող ենք, որ հէնց դորժի սկզբում՝ յաջողութեան է հանդիպել նա, յունիսի 6-ին՝ հիւսիսային կողմի բեմի վերայ՝ բանալով մօտ երկու արշին հողի խորութեան մէջ մօղայիկի մնացորդ, Լուսանկարից երևում է, որ ամբողջ է մնացել հաւանօրէն Աստուածածնի դէմքի կէս մասը, և աջ աչքն ամբողջապէս, աջ այտի կէսը, ճակատը մազերի հիւսուածքով և նիւթուսը, Զախ կողմից նկատուում են բացուած ծաղիկներ, Լուսանկարիչ պ. Գաղեանի տուած տեղեկութիւնների համեմատ, մօղայիկը կազմուած է գոյնզգոյն քարերից և ոչ ապակիներից, ինչպէս Զուարթնոց եկեղեցու խաչն էր, որոնցից մեծերը մօտաւորապէս տասը կոպէկանոցի մեծութեամբ, նրբութիւն արտայայտող մասերի, ինչպէս աչքի և այտի քարերը աւելի մանր են, նիւթուսը կազմուած է սև քարերից, մազերի հիւսուածքը բաց, աչքը մօյգ շաղանակադոյն, կոպերը, ինչպէս և բիրը աւելի սև գոյներից, Գեղեցիկ մօղայիկներ են գտնուած հայ արձանագրութեամբ երուսաղեմում, մօտաւորապէս ԺԱ. դարու դօրծ, Գրեթին նայելով ներկայ գիւտը Զուարթնոց եկեղեցու խաչի հետ ցոյց է տալիս, թէ բուն Հայաստանում ևս այդ արուեստը պէտք է մօտք գործած լինի աւելի վաղ ժամանակներից, Հայոց արուեստի պատմութեան համար ուշադրութեան արժանի է այս գիւտը, Մենք հետզհետէ տեղեկութիւն կտանք հ. Խաչիկի պեղումների մասին:

Յուլիս 20/907 Դուին

Ազգիս Վեհափառ Հայրիկի օրհնութեամբը և Ս. Պետերբուրգի Կայսերական հնագիտական յանձնաժողովի թոյլտուութեամբը երկրորդ ամիսն է, որ ձեռնարկած եմ Դունայ սուրբ Գրիգոր կաթողիկէ եկեղեցւոյ և սուրբ Սարգիս (Սերգիա) եկեղեցւոյ աւերակների պեղմանը:

Առ այժմ՝ բացուած է սուրբ Գրիգորի ամբողջ յատակագիծը նման Թալինի մեծ կաթողիկէի յատակագծին։ Խաչաձև է տաճարի կաղնութիւնը. հինգ սեղան, հինգ դռն, երկարութիւնը սեղանով հանդերձ՝ $55\frac{1}{2}$ արշին մէջէմէջ, պատերի լայնութիւնը՝ 3 արշ. տաճարի լայնութիւնը՝ մէջէմէջ $25\frac{1}{2}$ արշ.։ Արևելեան, հարաւային և հիւսիսային մեծ սեղանները լայնութեամբ 10 արշ. հարաւայինի և հիւսիսայինի խորութիւնը՝ անյայտ. Սեղանների կաղնութիւնը՝ ներսից կլոր, դրսից հինգ անկիւնով։ Դռների լայնութիւնը՝ $2\frac{1}{2}$ արշ. լուսամուտների թիւը՝ անյայտ։

Դռնայ կաթողիկէի թէ՛ յատակը և թէ՛ առաստաղը մոզայիկներով զարդարած է եղել. հիւսիս արևելեան փոքր սեղանի յատակի վերայ մնացել է բաղդի բերմամբ Դռնայ Աստուածամօր գլուխը. ձախ աչքի մոզայիկները թափուած. երեսի բերանի մասը նոյնպէս։ Յատակի վերայ արևմտեան և հարաւային դռների կողմից բաւական տարածութեամբ մոզայիկ յատակ զանազան գոյնզգոյն քարերով գորգաձև բռնուածքով։ Տաճարի պատերի ձեփերը նոյնպէս զանազան գոյններով ներկած, ինչպէս Զուարթնոց եկեղեցում։ Թէ՛ յատակի և առաստաղի մոզայիկներից նոյնպէս և պատերի ձեփերի ներկած կտորներից բաւական քանակութեամբ ժողովածու ունիմ ապակէածածք դարակներում՝ դասաւորած. ապակեայ կանթեղների կտորտանք, կաւեայ ամանների մասեր, երկաթեայ բեռներ և այլն գործիքների մասեր. գերեզմաններից հանած կերպասեայ հանդերձների կտորտանք, ժապաւենաձև ասեղնագործ սուրբ բանուածքի մնացորդէն։ Սուրբ Սարգիս եկեղեցու աւերակներում գտնուած է առ այժմ՝ մի սիւնախարիսիս և երկու խոյակ՝ նման Զուարթնոցի խոյակներին։ Հունձի պատճառով ընդհատեցի պեղումներս երկու շաբթով։

Շոգերի պատճառով ամսոյս 9—14-ը պեղումներ կատարեցի Դառնիի Տրդատաշէն սարահարթում։ Մի շաբաթուայ ընթացքում հողիւ կարողացայ 130 շինութեան քա-

րեր աւերակից դատել: Քարերից նշանաւոր են չորս հատ նուրբ քանդակներով սիւնախոյակներ: Իմ գտած խոյակներից չորսը գտնվում է Երեւանում՝ Երկուսը հին գիմնազիայի բակում (պ. Թագէտս Քալանթարի տանը)՝ Երկուսը, նահանգապետի բակում: Երեքը՝ Աղջաղչլաղ գիւղի եկեղեցում (շինած 1851) և երեքն էլ՝ Զոհրաբու գիւղի եկեղեցում (շինած 1880) Ազատ գետի մօտ: Ըստ վկայութեան Սիմէոն Աբարանցւոյ՝ Գառնիի սիւները բաղկացած են եղել 24-ից: Առ այժմ՝ յայտնի են 14-ը: Սոյն խոյակները ամրացրած են եղել սիւների վերայ պղնձեայ գամբուով, արճիճեայ հալոցքով, իսկ շինութեան քարերը իրար հետ կապած են եղել երկաթեայ կապերով, նոյնպէս արճիճով ամրացրած՝ ըստ վկայութեան Խորենացւոյ, Գտնուած են քիւփերի (կառնեղների) վերայ առիւծների բարձրաքանդակներ և նրաշալի կերտուածքներ:

Շինութեան ներքի յարկը գլխավին կանգուն է. իսկ վրայ երկուսը հիմնարկ վլատակների կոյտեր և զանգուածներ են ձևացնում: Հիւսիսային կողմից ինն աստիճաններով բարձրանալիս են եղել վերնայարկը. գտնուած է առաստաղի և խոյակների վերայի զարդաքարերը, Լիայոյս եմ որ հմուտ ճարտարապետ Թորոս Թորոմանեանի ջանքերով կարելի լինի վերակազմել:

Հաւատքս մեծ է, որ մերազգի կարողաւոր մարդիկ ուշադրութիւն կգարձենն ձեռնարկածս պեղումների վերայ և իրանց լուսման չեն խնայի ազգային և եկեղեցական պատմութիւնը ճշտացնելու հնագիտական լայնածաւալ պեղումներով և հնութիւններով:

Թանգարանապետ Հայրիկեան նորակառոյց Թանգարանի Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի.

Խաչիկ Ժ. վարդապետ Զուարթնոց.

